ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

ՍԱԹԵՆԻԿ ՂԱՓԼԱՆՅԱՆ

Հոդվածը ներկայացնում է Կոմիտասի հինգ սաներից մեկի՝ Միհրան Թումաճանի կյանքը և բազմակողմանի գործունեությունը: Խոսվում է նրա խմբավարական, երաժշտագիտական-հրապարակախոսական և հավաքչական աշխատանքների մասին: Արժեվորվում են նրա համերգները, հոդվածները և հատկապես «Հայրենի երգ ու բան» ժողովածուն, որը նրա կյանքի գլխավոր գործն էր: Այս աշխատանքներով նա մեծապես նպաստել է հայ երգի պահպանմանը և տարածմանը՝ իր նշանակալից ավանդը բերելով հայկական երաժշտական մշակույթի մեջ:

Բանալի բառեր – Միհրան Թումաճան, Կոմիտաս, Կոմիտասի հինգ սաներ, «Հայրենի երգ ու բան»:

Հայ երաժշտական մշակույթի երախտավորների շարքում իր բացառիկ տեղն ունի Մ.Թումաճանը: Բանահավաքչություն, երաժշտագիտություն, խմբավարություն, երաժշտական քննադատություն և հրապարակախոսություն. ահա նրա բազմաբեղուն գործունեության այն ոլորտները, որոնցում կատարած իր ներդրումով նա մեծապես նպաստել է հայ երաժշտական գանձերի պահպանման և տարածման գործին: Որպես Կոմիտասի սան և արժանի հետևորդ՝ նա հավատարմորեն շարունակեց իր մեծ ուսուցչի սկսած գործը և օտարության մեջ, հայրենիքի կարոտը սրտում, ողջ կյանքում հավաքեց երգեր, բազմապիսի բանահյուսական նյութեր, որոնք հետագայում պետք է կազմեին նրա նշանավոր «Հայրենի երգ ու բան» ժողովածուն: Ճակատագրի հարվածներն ու կյանքի փորձությունները չխանգարեցին նրան իրագործելու իր մեծ և նվիրական առաքելությունը՝ ծառայել հայ դարավոր երգարվեստի պահպանման, համակողմանի ուսումնասիրության և քարոզչության գործին: Դա էր նրա կոչումը, որը տարեցտարի դարձավ հոգևոր պահանջ, անհագուրդ կիրք և կյանքի նպատակ: Հայ երգը Թումաճանի համար մշտապես եղել է վայելքի անսպառ աղբյուր, խոսակցության անհատնում նյութ և հավատամքի նվիրական խորան: Թումաճանն ապրել է արգասավոր կյանք՝ թողնելով մի մեծածավալ ժառանգություն, որը դեռ սպասում է իր մանրակրկիտ հետազոտմանը և ըստ արժանվույն գնահատմանը:

Միհրան Թումաճանը ծնվել է Սեբաստիայի Կյուրին քաղաքում 1890 թվականի հոկտեմբերի 21-ին: Նա զավակն էր Թովմաս և Մարիամ (Նահապետյան) զույգի: Նրանց ունեցած ինը զավակներից առաջին երեքը մահացել էին վաղ մանկական հասակում: Այս վշտից մղված՝ նրանք որդեգրեցին աղ-

քատ ընտանիքից մի աղջկա, որ չար աչքը վերանա իրենց տան վրայից: Եվ իրոք, հաջորդ ծնունդները քաջառողջ էին: Միհրանն այդ ապրողների շարքում երկրորդն էր: Նրա մկրտության անունն ընտրվել է վիճակահանությամբ, երեք տարբեր անուններից՝ Գագիկ, Միհրան և այլ անուն[1]: 1895թ. հայկական կոտորածների ժամանակ նրանց ընտանիքը հրդեհի և ավարի զոհ է դառնում: Հաջորդ տարի՝ 1896-ին, Թումաճանների ընտանիքը փոխադրվում է Սեբաստիա, և այստեղ Միհրանը ստանում է իր նախնական կրթությունը Շիշմանյանի հիմնած Մկրտչականների (բապտիստական) վարժարանում: Ապա մի քանի տարի հաճախում է Մանուկ Նորհատյանի (Պատուելի) մասնավոր դպրոցը, որը նաև նրա ընտանիքի բնակարանն էր:

1900-ին Թումաճանն ընդունվում է Սեբաստիայի ամերիկյան բարձրագույն նախակրթարանը (հայ սքուլ), որն ավարտում է 1905-ին: Ապա 1906-1909 թվականներին անցնում է Մարզվանի Անաթոլիա քոլեջի դասընթացը: Այստեղից է սկսվել նրա երկարամյա բարեկամությունը բանասեր-քննադատ Հովհաննես Ավագյանի հետ, ում անունը հաճախ է հիշատակվում նրա նամակներում որպես «Հովհաննես փաշա»:

1909-ին Թումաճանների ընտանիքը տեղափոխվում է Պոլիս: Այստեղ Միհրանը դառնում է թուրքական համալսարանի իրավաբանական բաժնի ուսանող: Ավարտում է 1913 թվականին, սակայն նրա խառնվածքի տեր երիտասարդը հետագայում բոլորովին այլ ասպարեզ պետք է ընտրեր: Պատանեկան տարիներից Թումաճանը զմայլվել է ժողովրդական բառ ու բանով, գրառել հանելուկներ, առածներ, մանկական խաղեր, խաղասելուկներ և երգերի խոսքեր: Այդ տարիներին նա դեռ երաժշտական բավականաչափ պատրաստվածություն և նոտագրման հմտություն չուներ, որպեսզի գրի առներ նաև երգերի մեղեդիները: Նա և իր ընկեր Վարդան Սարգսյանը՝ իբրև երգասերներ, անդամագրվել էին Պոլսի Սկյուտար թաղամասի երգչախմբին: 1910 թվականին, երբ Կոմիտասը եկավ Պոլիս, նրա շուրջը համախմբվեցին տեղի խանդավառ մտավորականներն ու երաժշտասեր երիտասարդությունը: Միհրանը մեծ Վարդապետի անձով և արվեստով հմայվածների շարքում էր: Եվ ահա սկսվում է նրա իսկական աշակերտության շրջանը: Իր առանձնահատուկ օժտվածության շնորհիվ նա շուտով դառնում է այն երիտասարդներից մեկը, որոնք հետագայում պետք է կոչվեին «Կոմիտասի հինգ սաներ»: Այդ նույն

[1] **Ասատուրեան Յակոբ**, Հայրենի երգ ու բան, գրադատական, «Սփիւռք» շաբաթաթերթ 4/3/1973:

ժամանակահատվածում Պոլսում էր նաև հայ բառ ու բանի մեկ այլ ուսուցիչ՝ Եղիշե արք. Դուրյանը, որի խնկաբույր շուքի տակ Միհրանը պետք է գրաբարի և հայ մատենագիտության դասեր առներ:

1910-1914թթ. Թումաճանի կյանքի երանելի տարիներն էին, երբ նա երգում էր Կոմիտասի «Գուսան» երգչախմբում, անցնում Կոմիտասի մասնավոր երաժշտական դասընթացը՝ միաժամանակ ուսումնասիրելով հայ միջնադարյան գրականությունը, ժողովրդական բանահյուսությունն ու դասական գրողների ստեղծագործությունները: Այսպիսով, նա պատրաստվում էր իբրև երաժըշտական գործիչ Կոմիտասի ծրագրած ապագա երաժշտանոցի համար: Իր խոսքով՝ «երևակայական մեծամեծ դղյակներ»:

Իր հոգու ձևավորման այդ ժամանակաշրջանի մասին Թումաճանը գրում է. «Այդ օրերին էր (1910-ին), որ Կոմիտաս Վարդապետը Պոլիս էր եկել: Անմիջապես բոլորվեցինք շուրջը: Պոլիս, Իզմիր և Եգիպտոս տված նրա համերգներով արդեն հոգեկան տեղաշարժ էր կատարվել Արևմտյան Հայաստանի մինչև իսկ հեռավոր գյուղերի անկյուններում: Այլևս անկարելի էր այդ հրաշքով չտարվել: Կոմիտասի շրթունքներից կախված, փեշերին քսվեցինք, որ մեզ «կեր տա», «կուտ տա»: «Կերակրեց» մեզ առատորեն, չորս տարի մասնավորապես ուսուցանելով երաժշտական հիմնական գիտելիքներ, նաև հերկելով մեր սիրտը և հատիկ-հատիկ սերմեր նետելով մեջը: 1914-ին արդեն սկսել էինք «ճռվողել»: Փոքրիկ մանկական երգեր էինք գրում և Նիկողոսյան վարժարանի մանկապարտեզի փոքրիկների հետ վարժություններ անում»[2]:

Հանճարեղ Կոմիտասի հինգ սաներից յուրաքանչյուրը հետագայում յուրովի ժառանգեց իր ուսուցչի բազմաշնորհ անհատականության որևէ գիծը: Բարսեղ Կանաչյանը երգահան դարձավ՝ իր վառ անհատականությունը դրսևորելով ստեղծագործության մեջ: Այն սերը ժողովրդական երգի նկատմամբ, որ սերմանեց նրա մեջ Կոմիտասը, ամրացավ, զարգացավ՝ դառնալով խոր իմացություն, չմարող հետաքրքրություն և ձգտում՝ եվրոպական մասնագիտացված երաժշտության հունի մեջ հարազատ մնալ ազգային ավանդական երաժշտական լեզվամտածողությանը: Վարդան Սարգսյանը դարձավ խորագիտակ խմբավար, ժողովրդական երգերի հմուտ մշակող: Կատարյալ ձայնային տվյալներով էր օժտված Կոմիտասի մյուս սանը՝ Հայկ Սեմերճյանը: Նա «Գուսան» երգչախմբի անփոխարինելի մենակատարն էր: Վաղարշակ Սրվանձ-

[2] **Թումաճան Միհրան**, Հայրենի երգ ու բան, հ.1 / խմբ.՝ Ռ.Աթայան /, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 9:

տյանը խմբավար-մանկավարժ էր: Իսկ Միհրան Թումաճանը, թեև զբաղվեց խմբավարությամբ և ստեղծագործելու որոշ փորձեր արեց, բայց ի վերջո դարձավ Կոմիտասի գործունեության մեկ այլ բնագավառի՝ ազգագրագետ-երաժշտագետի ու բանահավաքի աշխատանքների շարունակողը:

Առաջին աշխարհամարտը, ավերը, զարհուրելի կոտորածը, Կոմիտասի կյանքի ողբերգությունը խափանեցին այդ երազանքների իրագործումը: Սակայն Կոմիտասի ձգած սերմերը տղաների հոգիների մեջ այնպիսի կենսունակ ծիլեր էին արձակել, որ նրանք չկամեցան ենթարկվել հոգեկան փլուզումներին և իրենց մեջ ուժ գտան շարունակելու սկսած գործը:

Միհրանին հարկադրաբար զինվորագրել էին թուրքական բանակ, սակայն նրան հաջողվում է փրկվել և ապաստանել Եգիպտոսում: «Զինուորագրութեան թէժ հոսանքը կը քաշե Միհրանը թրքական բանակի կասկածելի շարքերը, 1917 էն 1918: Բարեբախտաբար կը խնայուի իրեն դառնագոյն բաժակը Եղեռնին, եւ Զինադադարէն ամիսներ առաջ, Սիւրիայէն փախստական՝ կ'ապաստանի Եգիպտոս: Հոս կը սկսի անձնապես կազմակերպուիլ, ու կազմակերպել այնուհետեւ համերգներ՝ Աղեքսանդրիա, Հալեպ եւ այլուր»[3]: Կոմիտասի շնորհիվ նա արդեն խմբավարական բավականաչափ հմտություն էր ձեռք բերել, որը թույլ էր տալիս երգչախմբեր կազմակերպել և զբաղվել սիրած գործով: «Հինգ սաները, 1918ին, Պոլսոյ հինգ թաղերուն մէջ, կը կազմեն մէյ-մէկ երգչախումբեր, որոնք միատեղ 400 հոգինոց խումբով, երգահանդէս կու տան, 3000 հոգիի ներկայութեան»[4]: Այս և հետագա համերգները նպատակ ունեին տվյալ պատմական շրջանում զարկ տալու երաժշտական շարժմանը, ոգևորելու հայ հասարակությանը, ճաշակ թելադրելու, հաղորդակից դարձնելու թե՛ ազգային և թե՛ եվրոպական մաքուր գեղարվեստի արժեքներին: Բոլոր դեպքերում առաջնահերթությունն ազգային մշակույթի քարոզչությունն էր: Համերգների հասույթները հատկացվում էին ազգօգուտ նպատակների, այդ թվում նաև Կոմիտաս վարդապետի ապաքինման ֆոնդին:

Պոլսում, Ադանայում, Իզմիրում և այլ քաղաքներում համերգներ տալով՝ Կոմիտասի սաները մի փոքրիկ գումար կուտակեցին և երաժշտական ուսումը շարունակելու նպատակով 1920-ին մեկնեցին Փարիզ: Այստեղ Թումաճանը տեսական գիտելիքներ ստացավ Ռենե Լը Նորմանի դասընթացներում:

---

[3] **Ասատուրեան Յակոբ,** Հայրենի երգ ու բան, գրադատական, Սփիւռք շաբաթաթերթ 4/3/1973:

[4] **Տագէսյան Անդրանիկ**, Բ.Կանաչեան.Կեանքի մը երաժշտացումը, Պէյրութ, 2017, էջ 374:

Սակայն միայն այս գիտելիքները բավական չէին՝ ազգագրագետ-բանահավաքի դժվարագույն ճանապարհը հարթելու համար: Միայն եռանդուն հավաքչական գործունեության մեջ կարելի էր կիրառել և կատարելագործել ստացած գիտելիքները, խորանալ մասնագիտական խնդիրների մեջ, ըմբռնել ժողովրդական երգարվեստի էությունը: Փարիզում ուսանելու տարիներին՝ 1920-1923թթ., Թումաճանն առաջին անգամ նոտագրել է վանեցի բանահավաք Տիգրան Չիթունու երգած ավելի քան 60 երգերը: Դա այն Տիգրան Չիթունին էր, որից ժամանակին Կոմիտասը նոտագրել էր մի երգվող հատված «Սասնա ծռեր» դյուցազնավեպից՝ «Էսօր ես երազ՚մ եմ տիսեր»: Պրոֆեսոր Ռ.Աթայանի տվյալներով այդ հատվածը Կոմիտասը գրի է առել 1909-ին: Քաջ գիտակցելով, թե որքան ավանդապահ են վանեցիք, որքան սիրահարված են իրենց հողին-ջրին, երգ ու բանին, պարին ու ավանդապատումներին, Թումաճանը չէր կարող չհետաքրքրվել այդչափ գիտակ մի վանեցու իմացածով: Այդ տարիներից սկսած՝ Թումաճանն անհագուրդ եռանդով սկսում է նոտագրել ժողովրդական երգեր: Ճակատագրի բերումով, որ երկրում կամ քաղաքում էլ հայտնվեր, նա փնտրում և գտնում էր այն երգասացներին, որոնց հիշողության մեջ վառ էին պահպանվել հայրենի հողի հոգևոր գանձերը:

«Ինձ թվում է,- գրում է Թումաճանը,- թե այդ ժամանակ,1922-23 թվականներին է սկսվում իմ «հիվանդությունը»»: Խոսքն ավանդական երգարվեստով հիվանդանալու մասին է, որից բնավ բուժում չկա:

1923 թվականին Թումաճանը տեղափոխվում է Միացյալ Նահանգներ և մշտական բնակություն հաստատում այնտեղ: Եվրոպայում ստացած պատրաստվածությունը նա շարունակում է ինքնակրթությամբ կատարելագործել Վահան Թոփալյանի «Հայ մշակութային հիմնարկություն» գանձարանում[5] և Ամերիկայի խոշորագույն գրադարաններում: Նյու Յորքում Թումաճանն իր շուրջն է համախմբում տեղի գաղթական հայության շնորհալի երիտասարդներին և երկսեռ քառաձայն երգչախումբ կազմում, որի երգացանկում հիմնականում հայ ժողովրդական երգերն էին, ինչպես նաև հոգևոր երաժշտությունը: «...Պոլսից, Եգիպտոսից, Ադանայից, Իզմիրից ինձ պես այդ ափերը նետված աշակերտներիս խնդրանքով «Հայ երգ» անունով մի երգչախումբ կազմեցի և գրեթե կլանվեցի այդ աշխատանքով, հազիվ ժամանակ գտնելով գնալու մի

[5] Վահան Թոփալյանի այս գանձարանը հանրային մի հաստատություն է Բոստոնում, որտեղ պահվում են ոչ միայն հայկական, այլև համաշխարհային գրականության ու մշակույթի վերաբերյալ հազվագյուտ նմուշներ:

քանի մամիկների մոտ և իրենց գիտցածը հավաքելու»[6]:

Սկսվում է նրա ստեղծագործական կյանքի նոր շրջանը, որում գլխավոր տեղ է գրավում խմբավարական գործունեությունը:

1925 թվականին Թումաճանի ջանքերով ձևավորվում է «Հայ երգ» երաժշտական միությունը՝ նրա անփոփոխ ղեկավարությամբ: Այդ միության հրապարակած ծրագրում Թումաճանը հռչակում է իրենց գործունեության երեք ուղենիշները.

ա. հայ երգը սիրելի դարձնել Ամերիկայի հայ երիտասարդությանը,

բ. հայ երգը ծանոթացնել ամերիկահայությանը և օտարներին,

գ. մշակել երաժշտական դաստիարակություն:

Ընդհանուր գործունեության մեջ առանձնանում էին երկու ուղղություններ, որոնցից մեկն ընդգրկում էր երգչախումբը, անդամական ժողովները, երեկույթներն ու երաժշտական դասընթացները, իսկ մյուսը՝ համերգները, դասախոսությունները, հանդեսները, հրատարակությունները և օժանդակությունը շնորհալի անդամների երաժշտական դաստիարակությանը:

Այդ շրջանակներում Թումաճանն ակտիվ համերգային գործունեություն էր ծավալում: Հայտնի են նրա 1926-1929 թվականների տարեկան և ընթացիկ համերգները Նյու Յորքի տարբեր համերգասրահներում[7]:

Վեց-յոթ տարի նա այս աշխատանքը կատարեց մեծ հոգածությամբ և սիրով: Իսկ 1930-ական թվականներից երգեր հավաքելը դարձավ նրա գլխավոր զբաղմունքը: Թումաճան բանահավաքը հարցուփորձ անելով գտնում էր Միացյալ Նահանգների տարբեր վայրերում ապրող «մամիկներին ու պապիկներին», ինչպես նաև միջին սերնդի երգասեր ու բանիմաց մարդկանց և նրանցից կորզում էր իրենց իմացածն ու մտապահածը: Դա Սփյուռք կոչվող այն զանգվածի հոգևոր մշակույթն էր, որն անմատչելի էր Հայաստանի ազգագրագետների և ֆոլկլորագետների համար: Եթե չլիներ Թումաճանի անգնահատելի գործունեությունը, մեր ազգային ֆոլկլորային մշակույթի մասին պատկերացումը կլիներ միակողմանի և թերի:

---

[6] **Թումաճան Միհրան,** Հայրենի երգ ու բան, հ.1/խմբ.՝ Ռ.Աթայան /, էջ 10:

[7]«Հայ երգ» երաժշտական միության առաջին համերգը կայացել է Նյու Յորքի "Metropolitan Auditorium"-ի սրահում 1926թ. մարտի 14-ին: Երկրորդ համերգը՝ Նյու Յորքի "Princess" թատրոնում 1927թ. մարտի 27-ին: Երրորդ և չորրորդ տարեկան համերգները տեղի են ունեցել Նյու Յորքի "International House"-ում, համապատասխանաբար՝ 1928թ. ապրիլի 29-ին և 1929թ. հունվարի 20-ին:

Զուգահեռաբար Թումանյանը գրել է ժամանակի երաժշտական կյանքի իրադարձություններին և երաժշտական գործիչների գործունեությանը վերաբերող երաժշտագիտական-հրապարակախոսական հոդվածներ, գրախոսականներ, որոնցում ցայտուն արտահայտված են նրա գեղագիտական հայացքները: Հատկապես ուշագրավ են մեծն Կոմիտասին նվիրված հուշ-վերապրումները[8], Հ.Ասատուրյանի «Կոմիտաս Վարդապետ և հայ երգը» գրքի մասին[9], նրա երգապնակների թողարկման[10] և Ալան Հովհաննեսի նվագահանդեսի առիթով[11] գրված գրախոսականները, Շ.Պերպերյան արվեստագետին նվիրված հոդվածը[12], Ց.Բրուտյանի ժողովածուի վերաբերյալ արձագանքը[13]: Երաժշտագիտական վերլուծության փայլուն օրինակ է Բարսեղ Կանաչյանի «Նանոր»-ին նվիրված հոդվածը[14]:

Ստացած հարուստ գիտելիքների և փորձառության շնորհիվ Թումանյանը մշակել էր հավաքչական աշխատանքի իր սեփական հայեցակարգը՝ իր ուրույն մոտեցումներով և սկզբունքներով: Դրանք ամփոփ տեղ են գտել նրա ժողովածուի առաջին երկու հատորների առաջաբաններում և ծանոթագրություններում: Հատկապես արժեքավոր են առաջին հատորի գիտական օժանդակ նյութերը, որոնք լիակատար տեղեկություններ են տալիս հեղինակի մտադրությունների, բանահավաքչական աշխատանքի սկզբունքների, երիտասարդ ֆոլկլորագետներին ուղղված դատողությունների և թելադրությունների մասին, որոնք մասնագիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Ապրելով համեստ աշխատավորի կյանքով՝ Միացյալ Նահանգներում Թումանյանը հնարավորություն չունեցավ ավարտին հասցնելու և հրատարակելու իր երկարամյա աշխատանքի արդյունքը և դիմեց հայրենիքի օգնությա-

---

[8] Կոմիտասական, I հատոր, **Թումանյան Մ.**, Երկու հուշ Կոմիտաս վարդապետեն, Երեվան, 1969, էջ 240-252:

[9] **Թումանյան Միհրան**, Կոմիտաս Վարդապետ եւ հայ երգը, գրախոսական, «Պայքար» եռամսեայ հանդէս, 1963, Նիւ Եորք, էջ 77-79:

[10] **Թումանյան Միհրան**, Մէկ քանի նօթեր Յակոբ Ասատուրեանի երգապնակներու նուագման առթիւ: «Նոր գիր» եռամսեայ հանդէս, 1950, Նյու Յորք, էջ 52-55:

[11] Տպաւորութիւններ Ալան Հովհաննէսի նուագահանդէսին առթիւ, ԳԱԹ, Մ.Թումանյանի ֆոնդ (անմշակ):

[12] **Թումանյան Միհրան**, Շահան Պէրպէրեան՝ Արուեստագետը: «Նոր գիր» եռամսեայ հանդէս գրականութեան եւ արուեստի, 1950, Նյու Յորք, էջ 47-51:

[13] **Թումանյան Միհրան,** Հայրենաբաղձ հնչիւններ, գրախօսական, «Պայքար» եռամսեայ հանդէս, 1963, Նիւ Եորք, էջ 54, 55:

[14] **Թումանյան Միհրան**, «Նանօր-Նանօր», «Այգ» օրաթերթ, Պէյրութ, 1964, հոկտ. 10-11:

նը: Նա գիտակցում էր, որ իր աշխատանքը միայն հայրենիքում կարող է ըստ արժանվույն գնահատվել, մտնել գիտական շրջանառության մեջ և ծառայել հայրենի ֆոլկլորագիտության զարգացմանը: Թումանյանը հրավիրվեց Հայաստան՝ իր հայ գեղջուկ երգերի ստվար հավաքածուն հրատարակելու համար: 1966 թվականին, որպես ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտաշխատող նա զբաղվեց իր «Հայրենի երգ ու բան» ժողովածուն հրատարակության պատրաստելու աշխատանքով: Եվ քանի որ նրա հարուստ հավաքածուն պարունակում էր ոչ միայն ժողովրդական երգեր, այլև առատ բանահյուսական նյութ, անհրաժեշտ էր ՀԽՍՀ ԳԱ Արվեստի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտաշխատողների օգնությունը:

1972 թվականին լույս տեսավ այդ ժողովածուի առաջին հատորը՝ Ռ. Աթայանի խմբագրությամբ: Թումանյանը հրատարակության էր նախապատրաստել նաև երկրորդ հատորը, սակայն մահը նրան զրկեց իր հավաքածուի այդ և հաջորդ հատորները հրատարակված տեսնելու հնարավորությունից: Մ.Թումանյանը կյանքից հեռացավ 1973 թվականի հոկտեմբերի 28-ին, իսկ երկրորդ հատորը լույս տեսավ միայն տասը տարի անց: Քանի որ հատորը մնացել էր սևագիր վիճակում, երկարատև և մեծածավալ աշխատանք պահանջվեց՝ այն պատշաճ տեսքի բերելու համար: Երկրորդ հատորի երաժշտական բաժնի խմբագիրը Ռ.Աթայանն էր, բանահյուսական բաժնինը՝ Ա.Նազինյանը:

Երրորդ և չորրորդ հատորները կազմել է երաժշտագետ-բանահավաք Զավեն Թագակչյանը՝ ըստ Թումանյանի ծրագրածի և դիտողությունների: Ըստ որում երրորդ հատորի պատասխանատու խմբագիրը կոմիտասագետ Ռ.Աթայանն էր, իսկ չորրորդ հատորինը՝ Զ. Թագակչյանն ու Հ.Պիկիչյանը: Հինգերորդ հատորը, որում Թումանյանը նախատեսել էր զետեղել իր հավաքածուի օտարածին՝ օտարալեզու և օտարահունչ մոտ 300 երգերը, դեռ սպասում է գիտական ուսումնասիրության և հրատարակման: Նշված երգերը մասնակիորեն ուսումնասիրել են արվեստագիտության դոկտորներ Մաթևոս Մուրադյանը և Գառնիկ Ստեփանյանը, սակայն ուսումնասիրությունն անավարտ է մնացել Մ.Մուրադյանի անժամանակ մահվան պատճառով: Բացի դրանից, պահպանվել է Թումանյանի հավաքած ազգային-հայրենասիրական երգերի շուրջ երկու հազար նմուշ (ըստ Զ.Թագակչյանի), որոնք նա նախատեսել էր հրատարակել առանձին հատորներով:

Իր կյանքի վերջին տարիներն ապրելով հայրենիքում՝ Թումանյանն ըստ արժանվույն գնահատվեց իր տքնաջան և ազգանվեր աշխատանքի համար:

Որպես Կոմիտասի արժանի հետևորդ՝ իր ուսուցչի դասերը սերտած Թումաճանն ինքն էլ իր խմբավարական, երաժշտագիտական, հավաքչական գործունեությամբ սերունդներ է կրթել՝ բերելով իր անուրանալի ներդրումը հայ երաժշտական մշակույթի պահպանման ու բարգավաճման գործին: Ի վերջո, դարձել է մեկը, ով հայ դարավոր մշակույթի՝ իր պատկերացրած լուսապարար տեսլականն է ուրվագծել գալիք սերունդների համար:

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ МИГРАНА ТУМАДЖАНА

САТЕНИК КАПЛАНЯН

В статье представлены жизнь и многосторонная деятельность одного из пяти учеников Комитаса – Мигран Тумаджана. Говорится о его дирижерских, музыковедческих-публицистических и фольклористических работах. Оценены его концерты, статьи и особенно его сборник “Айрени ерг у бан” (“Армянские народные песни”), который является главным достижением его жизни. Этими трудами он в большой степени способствовал сохранению и распространению армянской песни, принося свой значительный вклад в армянскую музыкальную культуру.

Ключевые слова – Мигран Тумаджан, Комитас, пять учеников Комитаса, “Айрени ерг у бан”.

MIHRAN TOUMAJAN’S LIFE & WORK

SATENIK GHAPLANYAN

In this article considers the life and many-sided undertakings of M.Toumajan, one of the five pupils of Komitas. Ghaplanyan presents his work as a music conductor, public speaker, collector and transcriber of folk music as well as his studies on musicology. She holds in high regard Toumajan’s articles, concerts and especially his compilation of “Hayreni Erg ou Ban”, the foremost work of his life. Toumajan has greatly helped to preserve and disseminate the Armenian song music, making a notable and lasting contribution to the Armenian musical culture.

Key words – Mihran Toumajan, Komitas, Five pupils of Komitas, “Hayreni Erg ou Ban”.